ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

Դատական դեպարտամենտի կարիքների համար գրասենյակային ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/27» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «27» հոկտեմբերի 2021թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Լևոն Հովհաննիսյան՝ Դատական դեպարտամենտի ղեկավարի ֆինանսատնտեսական հարցերով տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝

Էդգար Տոնականյան՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմի ղեկավար

Էդգար Մելքոնյան՝ Դատական դեպարտամենտի արձանագրային վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

Արմինե Ալիխանյան՝ Դատական դեպարտամենտի հաշվապահական հաշվառման վարչության գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի քարտուղար՝

Արուս Խաչատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ

1. Տեղեկատվություն՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-21/27» ծածկագրով ընթացակարգի շրջանակում Ֆորտունա սիթի ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրված անհամապատասխանությունների շտկման և հայտի գնահատման արդյունքի վերաբերյալ.

Ֆորտունա սիթի ՍՊԸ-ն հրավերով սահմանված կարգով և ժամկետում շտկել է հայտում արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովը որոշեց.

Ֆորտունա սիթի ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, այդ թվում eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ ընտրված մասնակցի, մերժված հայտերի և ընթացակարգը 4-րդ, 5-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու վերաբերյալ.

2.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց.

- 1-ին, 2-րդ, 3-րդ չափաբաժինների մասով Ֆորտունա սիթի ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից:

2.2 1-ին, 2-րդ, 3-րդ չափաբաժինների մասով ՕՖԵԼՅԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՌՈՒԲԵՆԻ Ա/Ձ-ի, Սմարթլայն ՍՊԸ-ի, 4-րդ չափաբաժնի մասով Ֆորտունա սիթի ՍՊԸ-ի, ՕՖԵԼՅԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՌՈՒԲԵՆԻ Ա/Ձ-ի, Սմարթլայն ՍՊԸ-ի, 5-րդ չափաբաժնի մասով Էյչ Գրուպ ՍՊԸ-ի, Էմ Սի Էս Կովկաս ՍՊԸ-ի աճուրդն ամփոփվելու պահին ներկայացրած գները գերազանցել են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների համար գնման հայտով սահմանված գները, ուստի նշված չափաբաժինների մասով ներկայացված հայտերը Համակարգի կողմից համարվել են մերժված:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ

կետի 3-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց գնման ընթացակարգը 4-րդ, 5-րդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Հանձնաժողովը որոշեց՝ գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Լևոն Հովհաննիսյան

Անդամներ՝

Էդգար Տոնականյան

Էդգար Մելքոնյան

Արմինե Ալիխանյան

Տիգրան Զեյնալյան

Քարտուղար՝ Արուս Խաչատրյան